

Կուտակային ժամկետային ավանդ

Առավել բարեկեցիկ ապագայի համար սկսեք խնայել այսօր

Այսօրվա պատշաճ պլանավորումը վաղը ֆինանսապես ապահովված և բարեկեցիկ ապագա ունենալու գրավականն է: Ներդրեք Ձեր ազատ ֆինանսական միջոցներն երկարաժամկետ կուտակային ժամկետային ավանդի տեսքով, կուտակեք և ավելացրեք Ձեր խնայողությունները՝ ապագայում դրանք միանվագ կամ Ձեր նախընտրած պարբերականությամբ հետ ստանալու ակնկալիքով:

Սկսեք խնայել և կուտակել այսօր, և ապահովեք Ձեր բարեկեցությունը երկարաժամկետ ապագայում:

Ավանդի արժույթ և նվազագույն գումար	ՀՀ դրամով ավանդի դեպքում նվազագույնը 100,000 ՀՀ դրամ, ԱՄՆ դոլարով կամ եվրոյով ավանդի դեպքում՝ 500 ԱՄՆ դոլար/եվրո
Ավանդի ժամկետ	ՀՀ դրամ - Նվազագույնը՝ 3 տարի Առավելագույնը՝ 10 տարի ԱՄՆ դոլար/եվրո - Նվազագույնը՝ 3 տարի Առավելագույնը՝ 5 տարի
Տոկոսադրույք	Կուտակային ժամկետային ավանդի դիմաց հաշվարկվող տոկոսադրույքը հավասար է Բանկի հաշվարկային տոկոսադրույքի և Բանկի կողմից ֆիքսված մարժայի գումարին/տարբերությանը: Ընթացիկ տոկոսադրույքների և այլ մանրամասների համար խնդրում ենք դիտել Տոկոսադրույքներ բաժինը:

Օրինակ

Դիտարկենք հետևյալ օրինակը՝ հաճախորդը 30 տարեկան է և որոշում է բացել կուտակային ժամկետային ավանդ՝ 100 000 ՀՀ դրամ սկզբնական գումարով, 10 տարի ժամկետով և 8.00% տարեկան անվանական տոկոսադրույքով: Ավանդի ժամկետի առաջին կեսի ընթացքում ամսական 30,000 ՀՀ դրամ կուտակելու և տոկոսագումարը կապիտալացնելու դեպքում, հաճախորդի 40 տարին լրանալու պահին նրա ավանդի մնացորդը կկազմի 3,233,885 ՀՀ դրամ (Եթե վերը նշված նախնական պայմանները չփոփոխվեն ավանդի ողջ տևողության ընթացքում):

Սկզբնական գումար	Ամսական ներդրումներ	Կուտակված գումար		
		5 տարի անց	7 տարի անց	10 տարի անց
100,000 ՀՀ դրամ	30,000 ՀՀ դրամ	2,258,303 ՀՀ դրամ	2,606,955 ՀՀ դրամ	3,233,885 ՀՀ դրամ



Կուտակային ժամկետային ավանդի դիմաց հաշվարկվող տոկոսադրույքը հավասար է Բանկի հաշվարկային տոկոսադրույքի և Բանկի կողմից ֆիքսված մարժայի փոփոխությունից գումարին/տարբերությանը:

Տոկոսագումարը հաշվարկվում է ավանդի գումարի նկատմամբ օրական կտրվածքով և կարող է վճարվել հետևյալ տարբերակներով.

- ü Հաշվեգրված տոկոսագումարի վճարում Ձեր կողմից նշված հաշվին՝ ամսական կամ եռամսյակային պարբերականությամբ
- ü Հաշվեգրված տոկոսագումարի կապիտալացում՝ ամսական կամ եռամսյակային պարբերականությամբ (տոկոսագումարի կապիտալացումը հնարավոր է միայն ավանդի կուտակային փուլի ընթացքում)

Կուտակային ժամկետային ավանդի համար վճարված տոկոսագումարը ենթակա է հարկման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Արտարժույթով ավանդի տոկոսագումարը, համաձայն հաճախորդի կողմից տրամադրված համապատասխան հրահանգի, կարող է վճարվել այն արտարժույթով, որով ներգրավվել է ավանդը, կամ ՀՀ դրամով:

Կարևոր նշում

Կուտակային ժամկետային ավանդի ընթացիկ անվանական տոկոսադրույքը (համապատասխանաբար նաև տարեկան տոկոսային եկամտաբերությունը) կարող է փոփոխվել՝ կախված Բանկի հաշվարկային տոկոսադրույքի փոփոխությունից: Տոկոսադրույքի փոփոխության դեպքում Բանկը Ձեզ տեղյակ կպահի փոփոխությունն ուժի մեջ մտնելուց առնվազն մեկ ամիս առաջ: Տոկոսադրույքի նվազման դեպքում մինչև փոփոխված տոկոսադրույքի ուժի մեջ մտնելու պահը դուք իրավունք ունեք դադարեցնել Կուտակային ժամկետային ավանդի պայմանագրի գործողությունը՝ ստանալով ավանդի գումարը և մինչև պայմանագրի դադարեցման պահը ավանդի դիմաց հաշվարկված տոկոսագումարներն ամբողջությամբ: Եթե ավանդի պայմանագիրը դադարեցվում է փոփոխված տոկոսադրույքն ուժի մեջ մտնելուց հետո, ապա կկիրառվի ավանդի վաղաժամկետ դադարեցման համար նախատեսված տոկոսագումարի հաշվարկման կարգը:

Կուտակային ժամկետային ավանդի տարեկան անվանական տոկոսադրույքներ¹

Արժույթ	Բանկի հաշվարկային տոկոսադրույք (<S)	Ավանդի ժամկետ			
		36 ամիս	48 ամիս	60 ամիս	120 ամիս
ՀՀ դրամ	9.50*	BR - 2.00%	BR - 2.00%	BR - 1.50%	BR - 1.50%
		7.50%	7.50%	8.00%	8.00%
ԱՄՆ դոլար	9.25**	BR - 7.75%	BR - 7.50%	BR - 7.25%	
		1.50%	1.75%	2.00%	
Եվրո	8.00***	BR - 7.50%	BR - 7.25%	BR - 7.00%	
		0.50%	0.75%	1.00%	



Վերը նշված տոկոսադրույքներն անվանական են, և ժամկետային ավանդից ստացվող տոկոսագումարը ենթակա է հարկման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

* ուժի մեջ է 2017թ. դեկտեմբերի 1-ից

** ուժի մեջ է 2018թ. մայիսի 1-ից

*** ուժի մեջ է 2015թ. մայիսի 2-ից

Բանկը ավանդի դիմաց տոկոսների հաշվարկն իրականացնում է ավանդային հաշվում առկա ամբողջ գումարի նկատմամբ, ավանդային պայմանագրի ողջ ժամկետի համար՝ օրական կտրվածքով: Ընդ որում, բանկը յուրաքանչյուր օրվա տոկոսադրույքը հաշվարկում է սահմանված տոկոսադրույքի 1/365 հարաբերակցությամբ (իսկ նահանջ տարվա համար՝ 1/366 հարաբերակցությամբ):

Կուտակային ժամկետային ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերություն

Տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան եկամուտ կստանայիք, եթե ձեր ավանդի դիմաց ստացված տոկոսագումարները վերաներդնեիք ավանդի տեսքով:

Արժույթ	Տոկոսագումարի վճարման/կապիտալացման պարբերականություն	Ավանդի ժամկետ			
		36 ամիս	48 ամիս	60 ամիս	120 ամիս
ՀՀ դրամ	Ամսական	7.76%	7.76%	8.30%	8.30%
	Եռամսյակային	7.71%	7.71%	8.24%	8.24%
ԱՄՆ դոլար	Ամսական	1.51%	1.76%	2.02%	
	Եռամսյակային	1.51%	1.76%	2.01%	
Եվրո	Ամսական	0.50%	0.75%	1.00%	
	Եռամսյակային	0.50%	0.75%	1.00%	

Ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերությունը հաշվարկվում է՝ ելնելով հետևյալ բանաձևից՝

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1 + APY)^{(D_n/365)}}$$

որտեղ՝

A – ավանդի սկզբնական գումարն է:

n – ավանդի դիմաց դրամական հոսքերի հերթական համարն է:

N – ավանդի դիմաց դրամական հոսքերի վերջին համարն է (ներառյալ նաև ավանդի ներդրման պահին դրամական հոսքը), որից հետո ավանդային պայմանագրի ժամկետը համարվում է ավարտված:

Kn – ավանդի ներդրման պահին և/կամ ավանդի գործողության ընթացքում ներդրված ավանդի և/կամ կապիտալացված տոկոսագումարների, առկայության դեպքում պարտադիր վճարների հոսքեր:

Dn – այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել ավանդի ներդրման օրից մինչև ավանդի դիմաց կատարվող հերթական՝ *n*-րդ դրամական հոսքերը ներառյալ: Ավանդի ներդրման պահին դրամական հոսքերը՝ $D1=0$:

¹ՀՀ դրամով կուտակային ժամկետային ավանդների տոկոսադրույքները գործում են 2018թ.-ի մայիսի 29-ից: Եվրոյով կուտակային ժամկետային ավանդների տոկոսադրույքները գործում են 2018թ.-ի ապրիլի 1-ից: ԱՄՆ դոլարով կուտակային ժամկետային ավանդների տոկոսադրույքները գործում են 2018թ.-ի մայիսի 1-ից:

Երկարաժամկետ կուտակային ժամկետային ավանդ բացելուց և սկզբնական գումարը ներդնելուց հետո, դուք, ինչպես նաև ցանկացած երրորդ անձ, կարող է շարունակել համալրել կուտակային ավանդը:

Կուտակային ժամկետային ավանդը կարող եք համալրել հետևյալ տարբերակներով.

- Ավանդի կուտակային փուլի ընթացքում Հաճախորդն իրավունք ունի կատարել ավանդի գումարի համալումներ ավանդի հաշվին մեկանգամյա մուտքագրումների միջոցով ավանդի կուտակային ժամկետի առաջին -ի ընթացքում՝ ընդհանուրը 5 միլիոն ՀՀ դրամի (ԱՄՆ դոլարով կամ եվրոյով ավանդի դեպքում՝ համապատասխանաբար 10,000 ԱՄՆ դոլար կամ 10,000 եվրո) կամ ավանդի սկզբնական գումարի 50%-ի չափով, որն ավելի մեծ է:
- Ավանդի կուտակային փուլի ընթացքում Հաճախորդն իրավունք ունի կատարել ավանդի գումարի համալումներ ավանդի ժամկետի առաջին կեսի ընթացքում՝ ավանդը բացելիս տրված գրավոր պարբերական գանձման հանձնարարականի հիման վրա (ամսական կամ եռամսյակային հաճախականությամբ), որն ամսական հաշվարկով չի կարող գերազանցել 250,000 ՀՀ դրամը (ԱՄՆ դոլարով կամ եվրոյով ավանդի դեպքում՝ համապատասխանաբար 500 ԱՄՆ դոլար կամ 500 եվրո) կամ ավանդի սկզբնական գումարի 2.5%-ը, որն ավելի մեծ է:

Ավանդի սկզբնական գումար է համարվում ավանդը բացելիս ավանդային հաշվին մուտքագրված, ինչպես նաև ավանդային պայմանագրով նախատեսված ավանդի բացման օրվանից մեկ ամսվա ընթացքում ավանդային հաշվին փաստացի մուտքագրված միջոցների հանրագումարը:

Գումարը կարող եք փոխանցել ավանդային հաշվին հետևյալ եղանակներով

- Բանկոմատային ցանց. Երևանում գործող բանկոմատային ցանցը ներառում է 50-ից ավել բանկոմատ 40-ից ավել վայրերում, որոնց միջոցով Դուք կարող եք իրականացնել ձեր փոխանցումները
- Հեռախոսային բանկային ծառայություն. զանգահարեք մեզ +374 (60) 655 000 շուրջօրյա հեռախոսահամարով և դիմեք մեր հեռախոսային կենտրոնի աշխատակիցներին (հեռախոսային բանկային ծառայությանը գրանցված լինելու դեպքում)



- Ինտերնետային/Մոբայլ բանկային ծառայություն. կատարեք ձեր փոխանցումները 24/7 ռեժիմով Էյչ-Էս-Բի-Սի ինտերնետային և մոբայլ բանկային ծառայությունների միջոցով աշխարհի ցանկացած վայրից, ցանկացած պահի, առանց որևէ հավելավճարի (ինտերնետային/մոբայլ բանկային ծառայությանը գրանցված լինելու դեպքում)
- Մասնաձյուղերի ցանց. ավանդը կանխիկ գումարով կամ փոխանցման միջոցով համալրելու համար կարող եք այցելել նաև մեր մասնաձյուղերից/գրասենյակներից ցանկացածը

Պարզեք, թե որքան եք կուտակել

Դուք կստանաք ամսական քաղվածքներ, որտեղ ներկայացված կլինեն ավանդի մայր գումարը, ավանդային հաշվին կատարված վճարումները, հաշվի մնացորդը և հաշվեգրված տոկոսագումարները:

Ամսական քաղվածքները ՀՀ տարածքում, ինչպես նաև էլեկտրոնային միջոցներով առաքվում են անվճար: Քաղվածքների առաքման այլ տարբերակների դեպքում ինչպես նաև քաղվածքների կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման համար Բանկը կարող է գանձել վճարներ՝ Բանկի ծառայությունների գործող սակագներին համապատասխան:

ՀՀ դրամից բացի ցանկացած այլ արժույթով բանկային հաշիվն ենթադրում է արտարժույթային ռիսկ կապված փոխարժեքի տատանումների հետ: Մասնավորապես, տվյալ արտարժույթի տատանումների դեպքում ՀՀ դրամով Ձեր գումարի համարժեքը կարող է փոփոխվել:

Թարմացվել է՝ 17/01/2019 15:00